ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

29 հունվարի 2013թ. N 9
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքի>> 605 հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՈՆՀ-728 հրամանագրի 1.6 –րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի հուլիսի 13-ի <<ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի քաղաքային համայնքին շենքի մաս օտարելու մասին>> N977-Ա որոշման 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2013թ. հունվարի 14-ի հանձնարարականը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Նվիրաբերության պայմանագրով նախատեսված գույքի հանձնման – ընդունման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (նախագահ՝ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի- մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Մեսրոպյանին) նվիրաբերության պայմանագրի կնքումից հետո եռօրյա ժամկետում ապահովել պայմանագրով նախատեսված գույքի հանձնում- ընդունումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2013թ. հունվարի 29 -ի
թիվ 9 կարգադրության

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ - ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

1.Մեսրոպյան Մեսրոպ- ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի - մարզային հողային պետական տեսչության պետ, հանձնաժողովի նախագահ:

2. Կարապետյան Հայկ- ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ, հանձնաժողովի անդամ:

3. Հակոբյան Ղազարոս- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հակահամաճարակային տեսչության պետի տեղակալ,հանձնաժողովի անդամ:

4. Գրիգորյան Արամ- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

5. Ոսկանյան Սամվել – ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ աշխատակազմի Եղեգնաձորի մարզային ստորաբաժանման ռեգիստր, հանձնաժողովի անդամ:

6. Աղաջանյան Արմեն – ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,ճարտարապետ, հանձնաժողովի անդամ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Կ.ՍԱՀԱԿՅԱՆ